



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2613
Մարտ 13, 1997

Արժանաշնորհ
Տ. Սահակ Քհնյ. Քէյիշեան
Հովի Ա. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Հէյվըրհիլ

Սիրելի Տէր Սահակ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 26, 1997 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 16, 1997-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Սեւան Տէմիրտոնէն
Հարրի Ալեքսանեան
Բաֆիք Բարալեան
Լուիս Նիգոլոսի

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ թեմական պատգամատրի ընտրութեան համար մեր կողմէ դրկուած Դեկտեմբեր 9, 1996 թուակիր նամակին մէջ սխալմամբ «1995 Տարուան Տեղեկագիրներու հիման վրայ» գրուած էր, որ պէտք է ըլլար «1996» տարուան: Նկատի ունենալով որ 1996 տարուան ընթացքին դուք ունեցած էք 97 տրատու անդամ՝ համաձայն թեմական կանոնադրութեան համայնքի իրաւունք ունի միայն մէկ պատգամատրի: Ընտրութեան ընթացքին առաւելագոյն քուէ ստացող Փօլ Դաւիթեանի անունը պիտի ներկայացուի թեմական Պատգամատրական Ժողովին, իսկ յաջորդ առաւելագոյն քուէ ստացող Ծէյմս Տէրտերեանը պիտի նկատուի անձնափոխանորդ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

Khajag Barsamian

ԽԱԺԱԿ ԱՐԲ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ